## NATION ARMÉNIENNE

La nation arménienne est l' une des plus anciennes du monde: sa langue offre dans sa syntaxe plus de rapports avec les langues européennes qu'avec celles de l'orient. Elle a formé pendant deux mille ans, et jusqu'au 14 ième siécle un état indépendant.

Une taille élégante, et une physionomie spirituelle, distinguent cette nation, qui, toujours victime des guerres, dans lesquelles les grandes puissances se disputaient l'Arménie, a été obligée de quitter en partie le sol de ses encétres! Livrés au commerce, et aux fabriques, les Arméniens sont repandus et ont prospéré partout, depuis la Hongrie jusqu'en Chine; ils pénétrent dans des regions inaccessibles aux Européens; ils traversent les déserts de la Tatarie, et le plateau qu'arrose le Niger. Dans leur pays, comme dans l'étranger ils vivent ordinairement en grandes familles, sous le gouvernement patriarcal du membre le plus âgé, et dans une concorde rare. La religion des Arméniens est celle de l'ancienne Eglise orientale. Leur jeûnes, et leur abstinences surpassent en rigueur et en fréquences tout, ce qu'on voit, chez les autres sectes chrètiennes. On peut estimer le total de la nation arménienne à 5,000,000 d'individus.

MALTE—BRUN

GÉOGRAPHIE UNIVERSELLE

## ԱԶԳ ՀԱՅՈՑ

*Հայոց ազգը աշխարհիս հին ազգերէն մէկն է. Հայոց լեզուն համաձայնութեան կողմէն աւելի նըմանութիւն ունի Եւրոպականին՝ քան թէ արեւելեան լեզուաց հետ։ Հայոց ազգը երկու հազար տարիի չափ, մինչեւ ԺԴ դարը, անկախ կառավարութիւն ունեցաւ։*

*Աղնիւ հասակ մը և հանճարեղ կերպարանք մը, այս ազգի յատկութիւններն են։ Այս ազգը այն անընդհատ պատերազմներու մէջ գտնուած է, որով մեծամեծ տէրութիւններ կ'աշխատէին իրարու ձեռքէ յափշտակել Հայաստանը, և միշտ ստիպուած է եղեր իւր նախնեաց երկիրը մասամբ իսկ թողուլ։*

*Վաճառականութեան և արուեստագործութեան անձնատուր ըլլալով Հայերը տարածուած են և յաջողութիւն գտած ամեն տեղ, Հունգարիայէն մինչեւ Չինաստան։ Հայք կը մըտնեն այնպիսի տեղեր որոնք անմատոյց են Եւրոպացւոց։ Նոքա կ'երթեւեկեն Թաթարստանի անապատները և մինչեւ Նիկերի ոռոգած լեռնադաշտը։ Հայք ինչպէս իրենց երկրին՝ նոյնպէս օտարութեան մէջ միշտ մեծ ընտանիքներ կը կազմեն, հպատակելով Գերդաստանի ամենէն հասակաւոր անդամոյ նահապետական կառավարութեանը՝ և միաբանական չնաշխարհիկ կենսք վարելով։ Հայոց կրօնքը արեւելեան նախկին Եկեղեցւոյ կրօնքն է։ Հայք ծոմապահութեան և ժուժկալութեան կողմէն կը գերազանցեն ամեն քրիստոնեաներէն։ Հայոց ազգը կազմող անհատները ընդամենն կը հաշուին մօտ 5·000·000 (*)։*

ՄԱԼՏ—ԲՐԻՒՆ

ԸՆԴՀԱ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ԱՌԱՔԻՆԻ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ

*(Շարունակութիւն, տես թիւ 3)։*

### ԻԷ.

### ՉԱՐԱՍԻՐՏՔ

*Այս անձը ինծի չարիք ընել ու վնասել կը ջանայ, բայց ես արդեօք պատճառ տուե՞ր եմ իրեն՝ թէ չէ. եւ թէ տուեր եմ, պէտք չէ ամչնամ խոնարհելու ու իրմէ թողութիւն խընդրելու. և այսպէս բարեկամ մըն ալ կը ստանամ՝ և թշնամիէ մը կ'ազատիմ։ Մէկ թշնամի մը միայն ունենալը շատ է. իսկ բարեկամ՝ հարիւր ալ ունենաս դեռ քիչ է։*

*Թէ որ նախատինք ըրած ըլլայ ինծի, պէտք է միտքս բերեմ որ ինքն ալ ինծի պէս մարդ է, ու ամենքնիս ալ ենթակայ ենք սխալելու. դարձեալ պէտք է մտածեմ որ պակասութեանցը հետ ունի խել մ'ալ կատարելութիւններ։ Այս ազատութեամբ պէտք է զինքը դատիմ, եղած նախատինքը ա-*

(*) Յիշեալ աշխարհագիրը պակաս դրած էր մեր Ազգի թիւը. իսկ մենք ընդհանուրէն ընդունած կարծիքը նախադասելու համարեցինք։ Կը ցաւինք որ մինչեւ ցարդ ազգային ստոյգ վիճակագրութիւն չունինք։

digitised by A.R.A.R.@